արտայայտում եւ երկիրը կառավարում է իր իր ընտրած ներկայացուցիչների միջոցով:

Հեղինակի առաջին աշխատութիւնից — «Նոր Տետրակ, որ կոչի Ցորդորակ» — մենք իմանում ենք, որ Հայաստան կոչուած այդ բաւական ընդարձակ երկիրն ունի 20 նահանգ, 258 գաւառ եւ 103 քաղաք, 27,864,000 բնակչով, որի ուղիղ կէսը՝ 13,932,000–ը հայ, իսկ մնացած կէսը՝ այլազգի, «տաճիկ» ընդհանուր անունով:

Ինչպէս տեսնում էք, Հայաստանը բաւական խիտ ազգաբնակութիւն ունի. մանաւանդ հայերի թիւը չատ մեծ է: Հայաստանի գլխով անցած անվերջ փոթորիկները, թշնամիների դարաւոր տիրապետութիւնը, նրանց կոտորածները, նրանց անլուր հալածանքների ու բարբարոսութիւնների հետեւանքով տեղի ունեցած զանգուածային արտագաղթերը եւ այլ նման բազմաթիւ աղէտները — այդ ամէնը մեր հեղինակի համար կարծէք, ոչ մի արժէք չունին: Կարծէք նրանք ոչ մի դեր չեն խաղացել հայ ժողովուրդի թուի նուազման գործում եւ կամ եթէ անդամ խաղացել են, սակայն նա՝ Շահամիրեանը — ինչպէս երեւում է — չատ մեծ է ընդունում հայ ժողովուրդի սկզբնական թիւը—հաւանօրէն այն առասպելական 35 միլիոնը — որը պակասելով–պակասելով հանդերձ, այնուամենայնիւ դեռ եւս մօտ 14 միլիոն հայ մնում է Հայաստանում:

ԱԶԳՈՒԹԻՒՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարդկային հաւասարութեան սկզբունքի այնքան ջերմ կուսակից Շահամիրեանը մի անգամից փոխւում է, երբ հարցը վերաբերում է այդ սկզբունքի գործադրութեանը Հայաստանում:

Հայաստանում ապրող ժողովուրդները — նրա կարծիքով — հաւասար չեն: Նրանք բաժանւում են երկու կարգի — Հայ Լուսաւորչական ընիկներ եւ օտարազգիներ եւ օտար դաւանութիւնների պատկանողներ: Հայաստանը միմիայն Լուսաւորչական ընիկ հայերինն է եւ Հայաստանում ծնուած իւրաքանչիւր ոչ հայ–Լուսաւորչական — ինչ ազգից եւ դաւանութիւնից էլ լինի — պատիւ պիտի համարի՝ իրեն հայ կոչել եւ անպայմանօրէն պէտք է խօսի ու կարդայ հայերէն կամ ինչպէս ինքն է ասում՝ «Հայոց բառիւ եւ տառիւ» (Բ):

Ճիշդ նոյն տեսակէտն է սա, որ այսօր որդեգրել է «յեղափոխական» Քեմալստանը եւ այնքան մոլեգնօրէն կիրառում է կեանքում. բայց միայն այն տարբերութեամբ «որ Շահամիրեանը մի հպատակ եւ ստրուկ ժողովրդի զաւակ էր, ապրած ԺԸ. դարում, իսկ այսօրուան Տաճկաստանի վարիչները մի անկախ «յաղթական» երկրի զաւակներ են եւ սնունուած 20–րդ դարի «ամենանորագոյն» գաղափարներով:

Ինչպէս տեսնում էք, Շահամիրեանի Հայաստանում ընիկ եւ Լուսաւորչական հայը մի արտօնեալ, գերազաս ազգութիւն է: Բոլոր քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքները նա վայելում է առանց որեւէ սահմանափակման: Բացառապէս ընիկ հայ Լուսաւորչականը միայն կարող է ընտրել եւ ընտրուիլ բոլոր բարձր պետական պաշտօնների համար: Օրէնքը առ այդ յայտարարում է. «Ամենայն ծայրագոյն պաշտօն, յատկապէս տանուտէր, նախարար, դատաւոր, իշխան, սպարապետ, աստիճան, հանդերձ խորհրդակցօք, դպրօք, ատենաբանիւք եւ ամենայն զօրագլխօք մի՛ ոք ստանայցէ, բայց ի սեփական ազգէն հայոց, սեփական ծնունդ Հայաստանեաց, մկրտեցեալ ի Քրիստոս, աւանդութեամբ սր. եկեղեցւոյ Հայաստանեաց» (ԼԳ., ՄԴ. ՄԵ.):

Բացի դրանից, միմիայն Լուսաւորչական ընիկ հայը կարող է անշարժ հարստութիւն ձեռք բերել, վաճառել եւ կտակել. «Ամենայն բնութիւն մարդոյ ի ազգէ եւ ի ժողովրդենէ հայոց, մկրտեցելոց եւ հաւատացելոց ի Քրիստոս, կարող է դնել երկիր վասն ժառանգութեան իւրոյ եւ վաճառել երկիր ումեք առն, ի նոյն ազգէ եւ դաւանութեամբ» (Ը):

Միւս ընիկ ազգութիւնները, ինչպէս նաեւ դրսից եկած օտարականները, մի տեսակ ստորադաս վիճակի մէջ են: Ուղիղ է, թէեւ նրանք կարող են ազատ ապրել Հայաստանում, ազատ պաշտել իրենց կրօնը, ազատ երթեւեկել, ազատ իրենց գործերով զբաղուել, շարժական կայք եւ սեպհականութիւն ունենալ, վայելել օրէնքի ու պետութեան բովանդակ հովանաւորութիւնը. դեռ աւելի. նրանք ունին մի տեսակ ներքին ինքնավարութիւն անդամ դատական